



У.У.Липовъ
100
Музыкальный
1930р






-6 NOV 2011


ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

100

ԿՈՏԱՆՆՈՎՈՅ

499/155





Հ 2-1802
Հ 2-1802 ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

891.99

S-47

100

100

ԿՈՏԱՆՉԱԳՈՅ

Խմբագրությամբ և առաջարանով
Թ. ՄԱԿԻՆ ՑԱՆԻ

Г.П.Б на обяз. экз.
Лнгр. 1931 год
Акт № Ա-230

ИКВ. № 21330

М С М Х Х Х
1930

22 JUL 2013


50666

Սալելգամի 1-ին տպարան
Գրառեալ № 1031:
Պատվեր 61: Տիրաժ 2000:



39851-63

ՀՀԿ ՀՀԿ



Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Արդյոք ինձ հիշեմ ին այնտեղ...
Վ. Տ բ յ ա ն

իբրև պատասխան պոետի այս կասկածամիտ հարցին՝ Պետհրատը, նրա մահից տասը տարի անց, լույս ե ընծայում այս գիրքը, և նորից նրա պատկերը մեր առջև ե:

Փետրվարյան հեղափոխությունը բռնկեց թե չե—
նա բոլշևիկների շարքումն ե: Ախալքալաքում թե Պետրովադում նա հեղափոխական ջրապոտույտի մեջ ե:
Նրա անունը կարգում ենք սահմանադրական ժողովի բոլշևիկյան ցուցակում: Խորհուրդների յերրորդ և չորրորդ Համառուսական համազումարներից նա ընտըրվում և կենտգործկոմի անդամ: Ազգային գործոց ժողովրդական կոմիսարիատում նա փաստորեն ղեկավարում ե հայկական գործերը: Խորհուրդային իշխանության գեկրեատներն ու վորոշումները Հայաստանի և հայ աշխատավոր մասսայի մասին ընդունվել են նրա անմիջական աշխատակցությամբ: Նա գնացել ե Բրիստ, վորպես հայկական գործերի կոնսուլտանտ: Նա ձեռնարկում ե այն պահին անասելի գժվարություններով

ի ճամփորդություն չաշտարիսան և չյուսիսային կովկաս՝ հայ փախստական մասսաների ոգնության գործը կազմակերպելու նպատակով, արդեն իսկ ծայր աստիճան հյուծված որհասական հիվանդությունից: Նա լույս և ընծայում «ի՞նչ ե ասել Ենինը գյուղացիներին» բրոյցուրը—պրոպագանիստական գրականության չգերազանցված մի նմուշ, — գործի արանքում հապճեպ թարգմանում ե Ենինից՝ «Կարլ Մարքսի կենսագրությունը» և «Պետությունն ու հեղափոխությունը»:

Միակ վոտանավորը, վոր նա լույս ընծայեց—Ստ. Շահումյանի հիշատակին նվիրված «Գաղեն» և յեղի այդ շրջանում:

Նա անհաշտ և անողոք պայքարել ե հայ հականեղափոխական կազմակերպությունների գեմ, փակել ու ցըել և Պետրոգրադի «ռազմահեղափոխական կոմիտեն» և Մոսկայի «հայկական կոմիտեն», վերջապես նա Արտաքին գործոց ժողկոմատի հանձնարտությամբ ուղղորդում ե Թուրքեստան, սակայն ճանապարհին՝ Որենքուրզում վախճանվում ե 1920 թ. հունվարի 7-ին:

Տասը տարի առաջ, խորհուրդային իշխանության ամենազժվարին պահին, ամենաջերմ ենտուղիազմով ներշնչված մեր ընկերոջ մահը — մեծ կորուստ եր մեզ համար և այս տասը տարվա ընթացքում կոմմունիստ-Տերյանի գնահատականը վերաքննության չի յենթարկվել:

Այլ խնդիր ե պոետ Վահան Տերյանի ժառանգության արժեքափորումը:

Մի կողմից փաստերը կարծես անհերքելի համառությամբ հաստատում են, վոր պոետի հիշատակը այս տասնամյակում վառ և մնացել է նա կարդացվում և,

ինչպես իր կինդանության որով: Ռուսաստանի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, ինչպես և Հայաստանում, տեղի յեն ունեցել հուշ-յերեկույթներ ու ցերեկույթներ և միշտ բազմամարդ: Պոետի յերկերի լիակատար հրատարակությունը, վոր լույս ե ընծայել Պետհրատը Պոլսում և Յերևանում 1923 — 1925 թ., վաղաց արդեն սպառվել ե, և ահա Պետհրատը լույս ե ընծայում նրա «100 վոտանավոր»-ը: Ասել ե թե՝ «Մթնշաղի անուրջները» լույս են տեսնում չորրորդ տպագրությամբ, իսկ մնայած վոտանավորների մեծ մասը՝ յերրորդ: Մամուլը յերբեք մոռացության չի մատնել պոետին: Մյուս կողմից մեր յերիտասարդ գրողների սակավաթիվ մի խմբակ փորձեց պսակագերծ անելու վ. Տերյանի պոեզիան, հակա-հասարակական, վատառողջ և վնասակար հոչակելու նրա գրական ժառանգությունը: Խոսքս Յեղիշե Զարենցի ֆութուրիստական յելույթի մասին ե, վոր իր ժամանակին խորհուրդային մամուլում ստացավ արժանավոր հականարված: Նրան չաջողվեց «թքոտել» Տերյանի պոեզիան: Հետագայում ինքը Զարենցը լրեց իր իսկ ժխտողական-քացասական գիրքը Տերյանի նկատմամբ և պարզվեց, վոր մեր յերիտասարդ բանաստեղծների կողմից այդ յելույթը մի կարծեցյալ միջոց և յեղել իրենց իսկ մեջ հաղթահարելու Տերյանի զորավոր աղղեցությունը:

Յեկ ինչպես Մայակովսկին ամենիստիա հայտարարեց Ռեմբրանտին, այնպես ել Զարենց թողություն շնորհեց Տերյանին...

Հաճախ, Տերյանին նվիրված հուշ-յերեկույթներում բանախոսները, իբրև անուղղակի արձագանք Զարենցի և յուրայինների հիշված ձախլիկ յելույթի,

հարց են դրել՝ մե՞րն ե արդյոք Տերյանի գրական ժառանգությունը, թի մենք պետք ե նրանից միանգամայն հրաժարվենք: Այդ հարցին միշտ տրվել ե մի պատասխան՝ Տերյանը մերն ե, Տերյանը մեր բանաստեղծության խոշորագույն վարպետներից մեկն ե, և մենք վոչ մի գեպքում նրանից չենք հրաժարվում:

Ի՞նչն ե Տերյանի մնջ, վոր այսոր ել չի թույլատրում մեզ անտարեր մնալու գեպի նրա պոեզիան, վոր մեր որերում ել ունի արժեք ու արժանիք:

Իբրև ամբողջություն Տերյանի ստեղծագործությունը — պատկանում ե մեր գրական անցյալին, սակայն ուրիշ պոետների հետ համեմատած — իստ հականի, թումանյանի և այլն — մեր ամենամոտավոր անցյալին:

Վահան Տերյանը մեր գրական Պատնասում առաջին ուրբահիսն ե: «Ղարաշուխա» գյուղացիների շըրջանում — նա, իր պոեզիայով, առաջին մեծ քաղաքի բնակիչն ե:

Տերյանի բանաստեղծությունների մնջ մենք տեսնում ենք մի նրբամիտ ինտելիգենտ իր հոգեկան բարդ կազմով:

Նրա սերը — գեղջուկի յերգը չե «իր յարին»: Նա առաջին անգամ հայերեն լեզվով ասում է կնոջ՝ «դուք»: Առաջին անգամ գծագրվում ե հայ պոեզիայում գրական մշակը՝ «հոգնած զրքերից անհամար»: Նրա պոեզիայի պեյզաժը — յեթե գյուղական ե, ապա ուրեմն հռւշ ե, մանկությունից մնացած մտապատկերներ հայրենի գյուղից: Ընդհակառակը, ավելի ակտուալ ե քաղաքը — իր բուլվարով, մայթով, ավտոմոբիլով, քաղաքային յերաժշտությամբ, վորտեղ վալտորնով վայլու

են նվագում, վորտեղ հնչում ե դաշնամուրն ու շարժանկան: Մի խոսքով նրան նույնքան «հարազատ են մայթի քարերը», վորքան թումանյանին՝ լոռու լեռները:

Վահան Տերյանի որով Յերազայում թե Ռուսաստանում գրականության մեջ իշխում եր սիմվոլիզմը, Յեղ նա կարողացավ սիմվոլիզմի բոլոր դրական կողմերը բերել մեր գրականությանը, անկումային ծայրահեղություններն ու թեթևողիկ ծամածությունները թողնելով ուրիշներին: Նա առաջինը մատցեց մեր մեջ բանաստեղծական ձևերի հասկացողությունը իր սոնետներով, գաղելներով, տրիոլեաններով: Լեզվի նվազայնությունը ալիստերացիաների, ասառնանսների և այլ պրիոնների գործադրությամբ նա հասցրեց ծայրագույն կատարելության: Նրանից հետո այլևս անհնար դարձավ սոնետ վերնագրել բանաստեղծությունը, առանց պահպաննելու սոնետի ձևը: Վոտանավորի տեխնիկայի կողմից, հնչունային կատարելության կողմից նա մի որինակ եր, վորից ազդվեցին վոչ միայն յերիտասարդ պոետները, այլև իրենից ավագ և արեն միանգամայն կազմակերպված իսահակյանը, թումանյանը, Ծատուրյանը և այլն:

Նա մեր պոեզիայում տվեց վոճակորման առաջին և մինչև որս չգերազանցված որինակներ: Այս կողմից վահան Տերյանի աղղեցությունը նշմարելի յէ մինչև որս եւ:

Անցնենք սակայն Տերյանի պոեզիայի պարունակությանը:

Արդյոք նա հորթի պես հրձվել ե՝ «ինչ լավ ե, ինչ լավ» հեղձուկ աշխարհում (Բալմոն), կամ յերգել ե բուրժուայի անանմու շամպայնի բաժակում (Իգոր

Սերյանին): Հոլորտացել ե նա յերբ և իցե իր «հանձնարով», զինով ու գոհ բուրժուական բազարում: Ամենամենա: Տերյանը ավելի մոտ ե Բըյուսովին ու Բնոկին, բայց նրանցից առաջ պըոլետարիատին հարած ենրանցից ավելի պըոլետարիատին հարազատ:

Վահան Տերյանի վողջ ստեղծագործությունը իր հիմքում ունի անբավարարվածություն, դժգոհություն բուրժուական կարգերից: Այդ անբավարարվածությունն արտահայտվել ե խեղդված հեկեկանքով, վշտագին շեշտերով և, ավելի սակավ, ցասումի ու զայրութի կոչով՝ «յեղբայրներ, յելեք»:

Կապիտալիստական հասարակակարգի յերկու հակադիր դասակարգերից և վոչ մեկին նա չեր պատկանում իր սոցիալական դիրքով, սակայն իր վողջ եյությամբ նա համակրել ու հարել ե պըոլետարիատին: Ճիշտ ե, նրա պոեզիայում անբավարարվածությունն ու դժգոհությունը տիրող հասարակակարգից ավելի շատ պասիվ յեղանակով ե արտահայտվել քան ակտիվ ընդվզումներով, սակայն դա ներկա գեղքում կարևոր չե, քանի վոր մենք հարց ենք դնում՝ բուրժուական աշխարին հարազմտ յերգիչ ե յեղել Վահան Տերյանը, թե խորթ: Ապա՝ նրա հոգեկան զարգացումը պըոլետարիատին մերձնալու ուղիղով ե ընթացել, թե ընդհակառակը: Այսպես բնորոշելով Տերյանի պոեզիայի պարունակությունը, մենք կկարողանանք հասկանալ, թե ինչու իննը հարյուր յոթ-ութ թվականից նա «մերձկուսակցական» սոցիալ-դեմոկրատ ե, ճիշտ ե, առանց կազմակերպչական կապերի, բայց համենայն գեղս միշտ համակրող, իսկ 17 թվականի սկզբից՝ բոլշևիկների շարքում, մինչև իր վախճանը: Այլապես Տերյանի

հոգեկան կերտվածքի և քաղաքական նկարագրի մեջ կըացվի մի անանցանելի և անբացարելի վիճ: Վահան Տերյանը պըոլետագրող չի յեղել, բայց նա մեր անցյալի գրական գեմքերից ամենահարազատն ե մեզ համար: Ապարդյուն ե հիմա դիտողություններ անել այն մասին, թե արդյոք պիտի աջողեր նա գտնել գեղարվեստական հարմարավոր ձևեր՝ իր նոր, իր մարտական ապրումները, հեղափոխական խրոխտ տրամադրությունները մարմնացնելու համար: Նրա թողած սեագրությունները հաստատում են միայն այդ նոր ու խրոխտ շեշտերի առկայությունը և այն, վոր նա վորոնելիս ե յեղանցն նրանց համար հարմար ձևեր: Իսկ թե վիճակված ե յեղել նրան արդյոք գըտնելու այդ ձևերը, այսինքն՝ պըոլետագրող գառնալու — այդ գաղտնիքը նա հետը տարել ե գերեզման:

Տասը տարի առաջ Վահան Տերյանը վախճանվեց գեռ 35-ը ՀՄացած: Պարզ ե, վոր նա, վորպես արվեստագետ, տակավին, շատ ասելիքներ ուներ: Սակայն այն ել ինչ նրան վիճակվեց կատարելու, բավական ե, վոր մեր գրականությունը հիշի նրան յերախտապարտ զգացմունքով և հայ աշխատավորը՝ վորպես իր հարազատին:

Պ. Մակինցյան

1930 թ., 7 հունվարի

Թիֆլիս

1904-1908

ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

3085/-6
Սահուն քայլերով, աննշմար, վորպես քնքույշ մութիթե,
Մի սովեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն որորող հովի պես թիթե
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շնչաց,
Կարծես թե սիրո քնքույշ խոսք ասաց նիրհող դաշտերին.
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
Յեվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրաը լցրին...



FATUM

Կախարդական մի շղթա կա յերկնքում՝
Աներեռյթ, վորպես ցավը խոր հոգու.
Իջնում և նա հուշիկ, վորպես իրիկուն,
Ողակելով լույս աստղերը մեկ-մեկու:

Մեղմ գիշերի գեղազանգուր յերազում՝
Եյն աստղերը, վորպես մոմեր սրբազն,
Առկայծում են կարոտազին յերազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Յես ու գու յել շղթայված ենք իրարու,
Կարոտավառ յերազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազատ և ոտար...,

ԱՇԽԱՆ ՑԵՐԳ

Յըտահար, հողմավար,
Դողացին մեղմաբար
Տերեները գեղին,
Պատեցին իմ ուղին...

Ճաճանչները թոշնան...
Կանաչներըս աշնան—
Իմ խոհերը մոլար՝
Յըտահար, հողմավար...

Կրակներս անցան,
Ցուրտ ու մեղ և միայն...
Անուրջներս յերկնածին
Գնացին, գնացին...

Աշուն ե, անձրես... Ստվերներն անձն
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղակ
անձրես ու անձրես...

Սիրտըս տանջում ե ինչ վոր անուրախ
անհանգստություն...

Սպասիր, լսիր, յես չեմ կամենում
Անցած լույսերից, անցած յույզերից
տառապել կըկին.
Նայիր, ախ նայիր՝ ցալում ե նորից
իմ հիվանդ հոգին...

Անձրես ե, աշուն... ինչու յես հիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
ինչու յես հիշում.
Դու այնտեղ եյիր, այն աղմկահեր
կյանքի մշուշում...
Դու կյանքն ես տեսել, դու կյանքն ես հիշում—
Վոսկե տեսիլներ, անուրջների լույս...
Յես ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չկա արշալույս —
անձրես ե, աշուն...

* *

Ինձ թաղեք, յերբ կարմիր վերջալույսն ե մարում,
Յերբ տխուր գգվանքով արեգակը մնոնող
Սարերի արծաթե կատարներն ե վասում,
Յերբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, յերբ տխուր մթնաշաղն ե իջնում,
Յերբ լուսում են սրվա աղմուկները զվարթ,
Յերբ շողերն են մհենում, ծաղիկները—ննջում,
Յերբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին գալկացող ծաղիկներ ցանեցեք,
Վոր խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լոռություն, լոռություն, լոռություն անսահման...

ԿԱՐՈՏ

Իմ անվերջ ճամբի տանջանքից հողնած՝
Յես ննջել եյի վոսկեղեն արտում.
Ու ճչաց սիրտըս վայելքից անկարծ
—Թվաց վոր մեկը կանչում և տրտում...

Յեվ յես արթնացա խնդության ցավից. —
Գիշերվա հովն եր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն եր դժկամ նայում ինձ,
Մենակությունն եր քարի պես լոռում...

ԻՐԻԿՆԱԺԱՄ

Շուտով կըլոե աղմուկը գաժան,
Ու սիրտըս կըզզա քայլերդ փափուկ.
Դու նորից կիջնես, նուրը իրիկնաժամ,
Քո խաղաղ մութով գգվող-խուսափուկ:

Տիուր թերերդ անճայն կըփոես,
Կըզրկես հողը կանացի նաղով,
Յերկնքում անուրջ աստղեր կըվառես,
Կըլցնես հոգիս անուշ յերազով:

Ցուրտ ցերեկներից հավիտյան դժգո՞՞յ
Սիրոս կարոտ և քո գգվանքներին.
Դու ինձ չես խաբում, քնքույշ յերեկո,
Անուշ յերեկո, մեղմ ու մտերիմ...

Կընստեմ անվերջ, կընստեմ մենակ.
Դու կըփարվես ինձ թերերով ճկուն,
Բնքույշ կըզզվես հույս ու հիշատակ,
Կըպարզես մեղմիկ ցուքըդ իմ հոգուն:

ԱՇԽԱՆ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ

* *

Յես անջտաված եմ հայրենի հողից,
Հայրենի տունը՝ իմ սրտին ոտար.
Ինձ այրում ե միշտ մի անհագ թախիծ, —
Հավիտյան դյութող անհայտ ճանապարհ...

Հուզվում են, հոսում հեղեղները մեծ,
Մաղլցում վերև և թափալվում ցած.
Զմբուխտե ջրեր, ձեղ ով վրդովեց,
Հայրենական տուն, հավետ մոռացված...

Միենույն ե ինձ Հյուսիս թե Հարավ, —
Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում,
Կա իմ հոգու մեջ մի անհագ ծարավ.
— Հավիտյան ոտար, հայրենական տուն...

*Il pleure dans mon coeur
Comme il pleut sur la ville...*

Paul Verlaine.

Կրկին իմ հոգում
Իջավ մշուշոտ, արցունք անձրևող
Տրտում իրիկուն.
Իմ սրտում անցավ
Մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
Համբույրը խոնավ.
Կրկին պաղ միգում
Ամպոտ յերկինքը մեռած լույսերի
Թաղումն ե սգում:
Հողմը սրարշավ
Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ...
Անջատման ցավոտ
Զայներ դողացին ու հեղ դալկացան
Հեռվում անձանոթ.
Կրակներն անձայն
Լացող ամպերի միգում անսահման
Թոշնեցին, անցան...
Անձրէ անընդհատ
Մաղում ե վհատ թաղումի կոծով, —
Իմ հոգու մեջ ել
Աշուն ե իջել անամոք լացով,
Իմ հոգու մեջ ել...

ՀՐԱԺԵՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Վոչ տրտնւնջ, վոչ մրմնւնջ սգավոր,
Հեռացիր, մոռացիր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին մենավոր,
Կըզնամ իմ դժկամ ցալի հետ:

Իմ ճամբան անվախման մի գիշեր,
Ինձ շոյող վոչ մի շող չի ժպտա.—
Հեռացիր, մոռացիր, մի հիշեր.
Ինձ այդպես, քրոջ պես մի զթա...

Հուսաբեկ մութ ու մեղ թող լինի,
Իմ գերե թող արե չըլսնդա.
Լոկ յերկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպես, քրոջ պես մի զթա...

* *

Իմ գերեզմանին դուք չըմոտենաք,
Հարկավոր չե ինձ վոչ ծաղիկ, վոչ սուդ.
Հանկարծ կըզարթնի չերմ լոլու փափազ,
Սիրտըս չի գտնի վոչ մի արտասուք:

Իմ գերեզմանը թող լինի հեռվում,
Ուր մահացել են շշուկ, յերգ ու ձայն.
Թող շուրջըս փովի անանց լոռոթյուն,
Թող ինձ չըհիշեն, թող ինձ մոռանան:

Իմ գերեզմանին դուք չըմոտենաք,
Թողեք, վոր հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողեք, վոր լինեմ հեռավոր, մենակ.—
Չըզգամ, վոր կա սեր և ցնո՞րք և լաց...

Մ Թ Ն Տ Ա Ղ

Յես սիրում եմ մթնաշաղը նրբակերտ,
Յերբ ամեն ինչ յերազում ե հոգու հետ,
Յերբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
Ցընորում ե կապույտ մութի աշխարհում...
Չըկա վոչ մի սահման դնող պայծառ շող,
Սղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող. —
Հիվանդ սիրտը չի տրանջում, չի ցալում,
Վորպես յերազ մոռացումի անձավում.
Յեկ թվում ե, վոր անեզը ե ամեն ինչ —
Վոր վողջ կյանքի ե մի անսահման բաղցը նինջ...

Յ Ե Ր Ե Կ Ո

Յերեկոն փոեց իր թևերը մութ,
Անուշ նիրհեցին յերկինք ու յերկիր. —
Աչքերըդ փակիր, ինձ քնքույշ գրկիր,
Սուտ կյանքին խառնիր յերազանքը սուտ:

Լայն ըստվերները ընկան անազմուկ,
Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ...
Յես քեզ կըպատմեմ վոսկե հեքիաթներ,
Իմ սիրուն մանուկ, իմ քնքույշ մանուկ...

Կրծքիս գիր գեմքը քո տկրագալուկ,
Մոռացիր կյանքի տառապանքը մութ,
Սուտ կյանքին խառնիր յերազանքը սուտ.
Իմ սիրուն մանուկ, իմ քնքույշ մանուկ...

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ,
Ննջեցին անուշ յերկինք ու յերկիր.
Աչքերըդ փակիր, ինձ քնքույշ գրկիր,
Յես քեզ կըպատմեմ վոսկե հեքիաթներ...

Արդյոք հիշմամ ես. անտառ եր, առու...
Հեքյաթի պես եր—յերազի նման.
Խաղաղ յերեկոն խոսում եր անձայն,
Արդյոք հիշմամ ես.—Հեռո՞ւ յեր, հեռո՞ւ...

Արդեռք հիշմամ ես. յերկիրը պայծառ,
Ժպտում եր սիրով հավիտենական.
Գարունն եր յերգում ձայնով դյութական,
Արդյոք հիշմամ ես. առու յեր, անտառ...

Արդյոք հիշմամ ես. գիշերն եր գալու,
Հեքյաթի պես եր... Անտառ եր, առու...
Արդյոք հիշմամ ես. հեռո՞ւ յեր, հեռո՞ւ.
Կյանք, տիսուր հովիտ հավիտյան լալու...

Մի ոս առհավետ կյանքըս կանիծեմ
Ու գունատ հույսի քայլերով տարտամ
Կըգանեմ ուղին հեռավոր քո տան
Յեկ թույլ ձեռներով դուռըդ կըծեծեմ:

Տիսուր կըժպտաս դու հոգնածորեն
Ու հոգնածորեն դուռը կըբանաս.—
Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
Յեկ արցունքներըդ հանդարտ կըծորեն:

Յեկ գթությունը քո քրոջական
Սիրտըս կըլցնե խնդության լուսով,
Քո սուրբ ծնկները կըգրկեմ հուսով
Յեկ կըհեկեկամ և կըհեկեկամ...

Զմրան գիշերն ե մեղմորեն ընկնում
 Յեկ մեծ քաղաքի գեմքը մշուշում.—
 Յես դուրս եմ գալիս, փողոց եմ գնում
 Յեկ յերկար, յերկար մայթերն եմ մաշում:
 Բարձր տների պատուհաններում
 Պայծառ լույսերը հանդչում են մեկ մեկ.
 Յես արդեն վոչինչ չեմ մտարերում,
 Ինձ համար չըկա այսոր ու յերեկ:
 Կես գիշերն անցավ... Յես տուն չեմ գնում.
 Յերկար, անդագալ, մայթերն եմ մաշում.
 Շըջում եմ անվերջ, յերբեք չեմ հոգնում,
 Վոչինչ չեմ հիշում, վոչինչ չեմ հիշում...
 Լապտերը միզում մաղում ե պաղ բոց,
 Յես աննպատակ շըջում եմ անվերջ.
 Յես լուռ անցնում եմ փողոցից փողոց
 Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:

* * *

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
 ամենին մոռանալ.
 Չըսիրել, չըխորհել, չափսոսալ —
 հեռանալ...
 Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
 գիշերում այս անշող
 Արդյոք կա իրիկվա մոռացման,
 մոռացման վոսկե շող...
 Մի վայրկյան ամենից հեռանալ,
 ամենին մոռանալ.—
 Խավարում, ցավիրում քարանալ
 մին-միայն...
 Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
 ամենին մոռանալ.
 Չըսիրել, չըտենչալ, չըկանչել,
 հեռանալ...

Արդյոք նորից յերազներն են թափառում,
Սիրո անուշ նվազներն են ինձ կանչում.
— Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբյուրներն են կարկաչում:

Յես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
Արդյոք դժու յես նորից հոգիս մեղմ հուզում.
— Եյն գիշերն ե, այն հուշերն են տրտմաշուք,
Եյն աստղերն են ցուրտ յերկնքում յերազում:

Յես ընկած եմ անծայր դաշտում միայնակ
Յերազներըս, յերազներըս վոր անցան.
Արդեռք դժու յես գիշերի պես հերարձակ,
Գիշերի պես խորհրդավոր դյութական.
— Դալուկ աշնան մերկ անտառն ե շառաչում,
Լույս հուշերի վտակներն են կարկաչում...

Գարունը այնքան ծաղիկ ե վառել,
Գարունը այնպես պայծառ ե կրկին.
— Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպես գգվող ե յերեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.
— Շուրջըս վառված ե մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում ե սիրտըս մըրկում...

Անտես զանգերի կարկաչն եմ լսում,
Իմ բացված սրտում հնչում ե մի յերգ.
— Կարծես թե մեկը ինձ ե յերազում,
Կարծես կանչում ե ինձ մի քնքույշ ձեռք...

ԳԱՐԱՆԱՄՈՒՏ

Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
Յեվ հեղեղները խոսուն սառնորակ
Վողջունում են ինձ զվարթ ծիծաղով:

Չուզել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Դարսն ամեն տեղ նոր կյանք ես վառել,
Իմ սրտում ել ես թևերդ փոել,
Իմ հոգում ել ես հրդեհել նոր սեր:

Յեվ ահա կրկին զվարթ ու չահել
Դուրս յելա տխուր մենության բանտից.
Պայծառ աչքերը վողջունում են ինձ,
Յեվ յես չեմ կարող իմ ճիշը պահել:

Բացել ես իմ գեմ վոսկեղեն հեռուն,
Ծաղկել ես սարում, անտառում, արտում...
Ուղիշ յերգեր են հնչում իմ սրտում—
Վողջնոյն քեզ, արև, վողջնոյն քեզ, գարուն...

1909–1912

Թագավոր առաջակաց իրեն բարեց
Հայութ և նորոյ անուն ու հարաց
ու մեր անունը քառակ առաջարկէ
Առաջարկ ու ինչ պատճեն պետացա
Տաղաւոր և նորոյ պատճեն առ պատճեն
Կարծիք ու նորոյ պատճեն առ պատճեն
ու պատճեն ու նորոյ պատճեն
ու պատճեն ու նորոյ պատճեն
Sier + eot
Ու այս կրթիւ պարզ ու քանի
Խոր ժողով սպառագու բարուց
Դաշտաւոր պատճեն ու ինչ
Ու ինչ ու ինչ ու ինչ պատճեն
Առաջ և ու պատճեն ու կառաւ
Պատճեն և ու պատճեն ու պատճեն
Առաջ և ու պատճեն ու պատճեն
Առաջ և ու պատճեն ու պատճեն

Հայութան զմենյ և զմենյ և զմենյ մԱ
ՓՈՂՈՑԻ ՅԵՐԳԸ
— Հայութ և հայութ և հայութ մասնիքան
Պատուհանիս տակ լալիս և կըկին
Թափառիկ յերգչի յերգը ցավագին, —
Տխուր այդ յերգը վաղուց եմ լսելու զմենյ և
Կարծես թե յես եմ այդ յերգը հյուսել
Կարծես թե յես եմ լալիս այդ յերգում,
Կարծես թե քեզ եմ կարոտով յերգում...

* *

Սև գիշեր, և հուշեր և խոհեր անհամար,
Մոռացված յերազներ՝ շուշաններ թառամած.
Խնդություն հեռացած և անցած, և անդարձ, —
Տրտմություն մենավոր, միաձայն, միալար...

Մշուշներն են սահում... Մոռավում եռոփին...
Իմ որեր անհատնում, անխնդում և անտուն,
Ցնորքներ լուսավառ, ընդունայն, աղարդյուն,
Մոռացված են հավետ արևոտ ձեր ուղին...

Սև խոհեր անսպառ, անհամար, անհամար,
Սև գիշեր, և յուշեր և յուշեր ընդունայն,
Յերազներ իմ անդարձ — ծաղիկներ իմ գարնան,
Ի՞նչ կանչով ձեզ կանչեմ, ի՞նչպես լամ ձեզ համար:

այլաբ և ըմբաւոյի նմուժը
և տուզու ցջօնաթափն պիտի տն
սիւալ ու չղմիւն և այլալ խն
առապ և առավերտան զարթան իմ

* *

Հնչում ե անվերջ աշնան թախիծով
Դաշնամուրն այնտեղ, պատի հետեւում.
Հարազատ ե ինձ այդ յերգը հեծող —
Իմ անանց ցավով մեկն ել ե ցավում:

Աշնան տխրահեծ անձրեկի նըման,
Անձրեկի նըման լալիս են անվերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն
Պատի հետեւում ե իմ հոգու մեջ...

Զըդիտեմ՝ վորտեղից և գալիս
Զութակի հեկեկանքը տրտում
Յեվ լալիս և անվերջ ու լալիս
Յեվ անվերջ ծավալվում իմ սրտում:

Այսհույս և այդ յերզը, վորպես մութ
Դիշերըս, գիշերըս աշունքվա.—
Կարծեա սուգ են անում և անգութ
Յեվ դառը լալիս են իմ վրա...

Այնքան վիշտ կա անհույս այդ յերզում,
Այնքան դառը տանջանք ու թախիծ,
Յեվ անվերջ, հավիտյան և յերգում
Հեկեկուն այդ յերզը այնտեղից...

Յեվ ձուլված և արդեն իմ հոգուն,
Իմ բոլոր որերին և ձուլված.
Տրտմություն և իմ շուրջն ու բեկում,
Իմ հոգում և անվերջ սուգ ու լաց...

Ա՛խ, բոլոր կողմերում և թախիծ,
Ամեն տեղ և փոված տրտմություն.
Յեվ արդյոք՝ վորտեղից, վորտեղից
Սպասեմ ավետիք ու խնդում...

Ց Ն Ո Ր Ք

Ինձ չես սիրում, ուրիշին,
Ուրիշին ես սիրում դու—
Յեվ անզոր և ու չնչին
Վո դեմ տանջանքն իմ հոգու:

Դու անցնում ես ամեն որ,
Անցնում ինձ չես նկատում—
Յեվ գարձել եմ յես սովոր
Քամահրանքիդ անհատնում:

Քեզ խոնարհ ամեն անգամ
Գլուխ եմ տալիս խոնարհ,
Բայց յես աղքատ եմ այնքան,
Այնքան թշվառ քեզ համար...

Ամենքինն ես, իմը չես,
Ամենքին ես սիրում դու,
Ա՛խ, վոսկով են զնում քեզ,
Անհամ ցնորք իմ հոգու...
...

Դանդաղ ե քայլում հոգնատանջ իմ ձին,
Յեկ տաղտկալի յե այս ուղին մոլոր.—
Չըհշեցի մերժել տենչերըս բոլոր
Յեկ ցնորքներըս, վոր ինձ խաբեցին:

Անհուսություն և անվերջ վհատում
Յեկ դառնություն և լցված իմ հոգում.
Փոված և խավար և մահ և անկում.—
Ավերված ես դու, հայրենական տուն...

Վորքան ել գիշերն ահավոր իջնի,
Յեկ ուր ել գնամ՝ զլուխ դնելու
Հարազատ մի հող յես չեմ գտնելու
Սև ճանապարհիս որերում դժնի:

Տանջանք են ու խոց հուշերըս բոլոր,
Մըտքերըս ամեն — անամոք ցավեր.—
Խավար և շուրջըս և մահ և ավեր,
Մութով և լցված իմ ուղին մոլոր...

Ու քանի գնում՝ այնքան անհատնում,
Այնքան ցավոտ են խոհերըս անհույս.—
Դու չըկաս արդեն, դարձել ես զրույց,
Յերազ ես դարձել — հայրենական տուն...

Ահ, այս ցուրտ յերկրի անհայտում անհուն
Ընկնել և կրրչել և ննջել հավետ,
Վոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,
Ավերված յերազ — հայրենական տուն...

Ցուրտ անձրեն և միգում

հեկեկում,

Տիրությունն և յերգում

իմ հոգում:

Ապագա և անցյալ և ներկա

խառնվել են իրար,

Խավարել են որերն արևիա

և խելառ:

Վիճակիս լծի տակ

որերում

Ցես շըջում եմ մենակ

ու լոռմ:

Չեմ հիշում, մոռացել եմ արդեն

այն խոսքերը բոլոր. —

Հիմա կույր, հիմա համը եմ քո գետ

ու մոլոր...

Ցուրտ անձրեն և միգում

հեկեկում, —

Տիրությունն և յերգում

իմ հոգում...

RESIGNATION

Այսոր զթանք իրարու, —

Կեղծ լինենք ու չամաչենք,

Բախտ չըտենչանք ու հեռու

Տարիները չհշշենք:

Լունք միայն մի մեղմող

Լոռությունով ու հանգչենք, —

Բանանք սրտերըս մեռնող, —

Վորք լինենք ու չամաչենք:

Սիրենք իրար ու ներենք, —

Զընախատենք մեկ մեկու,

Ել չար սիրով չըսիրենք,

Անչար լինենք յես ու դու:

Այսոր զթանք իրարու,

Այսոր իրար չըտանջենք,

Լինենք անչար և հլու,

Հեկեկանք ու չամաչենք...

Նորից անձրե՛, մշտւշ, ամպ,
Թախի՞ծ անհուն, տիրամնք հեղ,
Աշնան, քեզ ի՞նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով յերգեմ քեղ...

Թռ մշուշը, քո վոսկի
Տերևները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վհատությանն իմ խոնարհ
Յեվ թփերը գողգոջուն
Յեվ խոտերը գետնահար...

Յեվ քո յերգը թախծալի
Իմ սրտի յերգն ե, կարծես,
Աշնան, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով յերգեմ քեղ...

**

Հեկեկում և անվերջ,

Հեկեկում.

Մենավոր ու վհատ

Իմ հոգուն

Հարազատ —

Անհատնում, անպատում

Կակիծով

Հեկեկում և տրտում,

Հեկեկում...

Մշուշոտ ու աղոտ որերում

Գիշերները յերկար ու անքուն

Փողցում, դաշտերում, անտառում, —

Անամոք իմ հոգում,

Անանուն և անտուն և անքուն

Մղկտում և անվերջ,

Հեկեկում, հեկեկում, հեկեկում...

Բուշն ե լալիս. հողմ ու ձյուն,
Մառախուզ ե և մշուշ.—
Ո՞վ ե անվերջ հեծեծում,
Ո՞վ ե կանչում այսպիս ուշ:

Ո՞վ ե շրջում անդադար,
Ո՞ւմ ե կանչում հիմա նոր.
Յես հեռու յեմ, յես ոտար,
Ասացէք թող հեռանա...»

Ասացէք թող հեռանա,
Թող մոռանա ինձ հավետ, —
Անդարձություն ե հիմա,
Չըկա գարձի արահետ:

Մեկը կորած շիրմիս մոտ
Հեկեկում ե և յերգում. —
Ո՞ւմ լացն ե այս, մւմ ցավոտ
Յերդն ե ճերմակ մըրկում...

Իմ շիրմիմը հեռավոր,
Յեվ մոռացված և մենակ,
Ո՞վ ե հուզում մենավոր
Իր թախիծով շարունակ:

Ոտար յերկրի դաշտերում
Ճուրտ գիշերում ձմեռվա
Ո՞վ ե անքուն դեգերում,
Անվերջ սգում իմ վրա...»

Արծաթաշող առուն առվին
Չայն ե տալիս ու յերգում,
Անտրտունջ ե լալկան ուսին,
Ուսին առվի յեղերքում...

Շուրջը ահա զիշեր ու յերգ —
Հանդիստ, հեքյամթ ու յերազ.
Կույս-ամպերը ճերմակ ու մերկ,
Աստղերն անժւշ, հեղանազ:

Սիրտ իմ յոգնած, մեղմ որհներգիր,
Հնազանդ ու ցնորուն,
Յերկնաք ու ծով, ամպ ու յերկիր,
Այս մարգերն ու այս առուն:

Եղիր գու յել պայծառ ու հեղ. —
Հեքյամթ, հանդիստ ու յերազ,
Ծաղկանց ու կույս ամպերի պես,
Աստղերի պես հեղանազ...

Արծաթաշող առուն առվին
Չայն ե տալիս ու յերգում,
Անտրտունջ ե լալկան ուսին,
Ուսին առվի յեղերքում...

Ելա դուրս դաշտ —
Լանաչ ծով,
Կանաչ ծով եր, անափի ծով. —
Առավոտն եր ժպտում հաշտ,
Բոցավառվում նոր բոցով...

Ցեղ ուղիներ բյուրավոր, —
Հեռավոր,
Կանչում եյին, ակնարկում —
Նոր եր սերըս, լայն ու խոր, —
Նոր եր աշխարն իմ հոգում...

Թողի տնակն իմ ավեր,
մութ ու հին —
Ու հեռացա խնդագին. —
Անհայտ, անհուն հեռուներ,
Զեր գիրին առեք իմ հոգին...

Լցվում ե վողոցն աղմուկ ու շարժում
 Դալուկ դեմքերին ծաղկում ե ժըպիտ,
 Փայլում են անհրն արևի փոշում,
 Յերկինք են պարզվում ծառերը վտիտ...
 Դեռ չըչորացած բուլ'վարի վրա
 Ճշում են զվարթ մանուկներն արդեն.
 Բոլոր խոսքերը խորհուրդ են հիմա,
 Յեվ հայացքները նետ են իրար դեմ...
 Մայթի քարերը հարազատ են քեզ —
 Քեզ նոր ե թվում յերգը հընամյա.
 Աղատ ե հոգիդ, անչար ե և հեզ,
 Յեվ տիսրությունը անուշ ե հիմա...
 Ժըպտուն աղջիկներ՝ ծաղիկների պես,
 Տիկիններ շքեղ և ծիծաղնլի —
 Բոլորը հիմա սիրելի յին քեզ,
 Ամեն ինչ անուշ խորհուրդով ե լի...
 Մեռած սրտերն եւ ծաղիկների պես,
 Բացվում են հիմա արևի փոշում,

Մի քաղցր հուզում արբեցնում ե քեզ,
 Ու, հոզսով մղված՝ հոզսըդ չես հիշում...

Որհնություն քեզ յերգ և յերազ և սեր,
 Որհնություն քեզ կյանք անուշ և անհուն
 Որհնություն և քեզ տանջանքի վիշեր,
 Յեվ յերկունք և մահ — փառք և որհնություն...

ԹԱՓԱՌՈՒՄԻՄ ՍԵՐ

Կըշարժեմ նորից քայլերը տարտամ,
Լապտերների հեղ լույսը կըգրկեմ,
Զվարթ անցորդին ուրախ կըժպտամ,
Ինքս ինձ կերպեմ...

Յեվ արբած կյանքի անուշ գաղտնիքով,
Վողջույն կըտամ յես ջրին ու հողին,
Կըկանչեմ զվարթ ու արբուն յերգով
անց ու դարձողին...

Յեվ ոտար կանանց ժըպիտը ծանոթ,
Յեվ մեծ քաղաքի աղմուկի հյուսկեն —
Յերկար գիշերիս յերազում աղոտ
քունս կըհսկեն...

ՓՈՂՈՑՈՒՄ

Գիշերվա փողոցները թափուր
Շըցեցի տրտում ու միայնակ,
Խոհերով և քաղցը և տխուր,
Յերազով դյութական ու հստակ...

Աշխարհում այս աղոտ յես քնքույշ
Մի հեքյաթ հյուսեցի քո մասին,
Պատկերը լուսեղեն ու անուշ
Պարզեցի կյանքի չար յերազին...

Մեկնեցի վիճակը անժըպիտ
Որերիդ որորին, որորին,
Կույս հոգուդ խնդությանը վըճիտ,
Հայացքիդ տխրությանը խորին...

Անաղմուկ, անտրտունջ, անհնչյուն
Գալիս ես ու նորից հեռանում,
Ու հեռվից դյութում ես ու կանչում,
Լուսերին, անմարմին, անանդւն...

ԱՌՈՅՈՒԹՈՓ

Տիրությունս անուշ ե, վորպես
Հեռավոր հեռավոր, կարկաչյուն.
Այսպես մեղմ ե իմ սերն ու տյնպես
Անուշ ե նա իմ սիրտը տանջում:
Չեմ ուզում վոչ անցյալը հիշել,
Վոչ գալիք որերին նետել հույս,
Հանգիստ ե իմ շուրջը և գիշեր,
Ու սիրտը չի տենչում արշալույս:
Անդորրել ե աշխարհը բոլոր,
Դուրսը ձյուն ե գալիս, փողոցում
Գիշերը և հանգիստ ե և խոր,
Ու սիրտը առավոտ չի ուզում:
Մաքուր ե իմ հոգին, ու հիմա
Որհնում եմ վիճակը յերկրային,
Հնդունում եմ սիրով կյանք ու մահ
Ու սիրտը պարզում եմ աշխարհին...
Անչար ե իմ հոգին ու հանգիստ,
Գիշերը անդորր ե, զուրսը ձյուն.
Նսջեցիք հավիտյան, վերք ու վիշտ,
Ծալալիր, լուսեղեն մենություն...

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Գարնան անուշ աղմուկով,
Գարնան յերգով դու յեկար,
Փայլով, փառքով ու շուքով,
Խնդությունով խելազար...

Սիրտը անուշ խոցեցիր
Սրեավոռ քո սիրով,
Սև որերը այրեցիր
Գեղեցկությամբ ու սիրով:

Սիրտը լիքն եր մութ մեգով,
Սիրտը թույլ եր ու տկար,—
Գարնան անուշ աղմուկով,
Գարնան յերգով դու յեկար...

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...
Հեքյաթ եր և հմայք և անծիր
Խոդություն մշուշում վարդագույն,
Դու նենզոտ քնրշությամբ ժպտացիր,
Արևոտ ժըպիտով իմ հոգուն...
Սիրո խոսք և համբույր և խոստում...
— Արբեցեք այս անուշ համերգում,—
Արդյոք մենք, թե խոսքերն են ստում,
Արդյոք մենք, թե աշխահն ե յերգում:
Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...
Կար հեռու մի յերկիր թովչական,
Արև եր վոսկեղեն աշխարհում.
Շողացին, ժպտացին - ել չըկան,
Ել չըկան պատրանքները սիրուն:
Յեվ թախիծ, և տրապւնջ և տանջանք,
— Դմւ յես այն, թե աշխարհն ե լացում. —
Խալարիր, խարուսիկ անրջանք,
Հեռավոր որերի հիացում...

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

Կար մի յերգ հեռավոր աշխարհում, —
Դու այն յերգն ես կրկնում հեռավոր —
«Յես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
Յեվ հին են քո խոսքերը բոլոր...

Յեվ այն վալ'սը — «անդարձ ժամանակ»,
Ծառուղին ամայի պուրակում,
Յեվ գիշեր, և համբույր և լուսնյակ...
Տաղտկալի, ձանձրալի պատմություն...

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

Պարում են խելագար խնջույքում,
— Ով կուզե՞ թող գաղտնիքն իմանա, —
Վոչ վերջ կա, վոչ սկիզբ այս յերգում, —
Յերեկ յես, այսոր դու, վաղը նա...

Պտտվիր, պտտվիր, կարուսել,
Յես քո յերգը վաղուց եմ լսել...

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
— Բարդիներն են բաց պատուհանիս տակ, —
Դու յես, վոր դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
Յել շնչում ես և անուշ շրշում,
Պայծառ արտմությամբ ինձ ես անրջում
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Ամպերը ճերմակ յերամով անցան
Թռչունների պես, — լուսեղեն յերադ, —
Դու յես, վոր դարձյալ ժապացիք անձայն
Բո հեռու հեռվից, անհայտ ու անհաս:

Զրերն են անվերջ միզում հեկեկում,
— Իմ սիրան և լալիս կարոտով տնհուն, —
Թվում ե, վոր դու տիրությամբ անքուն
Ինձ ես վորոնում աղոտ աշխարհում:

Յել ժպտում ես ինձ, ակնարկում քնքույշ
Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,
Յել շնչում ես և շրշում անուշ,
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում:

ԱՐԵՎԱԾԱԳ

Յես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
Բարձր, բարձր, — հեռավոր ու մենավոր.
Այնտեղ ցածում, դեռ նիբոհում են դաշտ ու ձոր,
Դեռ խավար և այնտեղ զաֆան ու լոին:
Սակայն շուտով կատարներից հեռանիստ
Արեն այնտեղ հուր կըթափե և վոսկի,
Յել կըցնծան դսշտերը լուս ու հանգիստ,
Յերկիրն անհուն կարոտ կյանքի և խոսքի:
Յել դու կերպես, զարթնած աշխարհ, իմ առաջ,
Կարձագանքես իմ վողջույնին սիրառատ,
Կըլսեմ յես գարձյալ աղմուկ ու շառաչ
Ու կըսիրեմ հերյաթային առորյադ:
Լոռություն ե, մութ և այնտեղ, սակայն իմ
Արտում արդեն արշալույս ե՝ հարություն, —
Վողջույն ձեզ մութ ուղիներում յերկրային,
Իմ յեղբայրներ, հեռուներում և բանտում...

1.

Մենության խավար դնդանից կրկին
Յես վերադարձա հզոր և հպարտ,
Յեվ ինձ վողջունեց աղմուկը դվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ, —
Նոր սիրով լիցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
Յեվ նոր յերգեր են հնչում իմ հոգում:

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսոր
Հրեղեն խոսքեր կռեմ և խնդում,
Լսեմ հաղթական մարտի ցնծություն,
Տեսնեմ շարքերը ձեր հզորազոր:

Յեվ լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
Յերբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
Արևածագի ցնծությամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճշամ՝ յեղբայրներ, ելեք...

2.

Միշտ նույն խոհերի շշուկին հլու,
Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
Յես գուրս եմ գալիս նորից շրջելու
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:

Շփոթ նվազով աղմուկ ու սուլոց
Շարժում են առաջ որը ժրաջան —
Բոցոտ խնջույքում, ճուլված խինդ ու կոծ,
Հյուսել են կյանքի կախարդված շրջան:
Հապճեղ հոսանքում և մարդ և անիվ
Ալեկոծությամբ մի խայտանկար
Խենթ փողոցների բավկաներն անթիվ
Զրերի նման խառնում են իրար:
Ամենի ձայնով յերկաթն ե խոսում,
Պողպատն և ճչում շաչյունով գողգոջ —
Յեվ բազմաղաղակ որերի լիզուն
Հնչում ե այստեղ, վորպես մարտակոչ:

Այս աղմկահյուս կյանքի խենթ բոցում
Այրում և սիրաըս սրբազան մի զող,
Հուզում և հոգիս մի վեհ հիացում,
Յեվ սալասափելին թվում և դյութող...

1.

Մենության խավար զնդանից կրկին
Յես վերադարձա հղոր և հպարտ,
Յել ինձ վողունեց աղմուկը զվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ, —
Նոր սիրով լեցուն՝ գարձայես ձեզ մոտ,
Յել նոր յերգեր են հնչում իմ հոգում:

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսոր
Հրեղեն խոսքեր կռեմ և խնդում,
Լսեմ հաղթական մարտի ցնծություն,
Տեսնեմ շարքերը ձեր հղորազոր:

Յել լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
Յերբ քնած լինեք՝ թշնամուց խարված,
Արևածագի ցնծությամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճշամ՝ յեղբայրներ, ելեք...

2.

Միշտ նույն խոհերի շշուկին հլու,
Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
Յես դուրս եմ գալիս նորից շրջելու
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:

Շփոթ նվազով աղմուկ ու սուլոց
Շարժում են առաջ որը ժրաջան —
Բոցոս խնջույքում, ձուլված խինդ ու կոծ,
Հյուսել են կյանքի կախարդված շրջան:
Հապճեղ հոսանքում և մարդ և անիվ
Ալեկոծությամբ մի խայտանկար
Խենթ փողոցների բավիղներն անթիվ
Զրերի նման խառնում են իրար:
Ամենի ձայնով յերկաթն և խոսում,
Պողպատն և ճչում շաչյունով դողդոջ —
Յեվ բազմազաղակ որերի լեզուն
Հնչում ե այստեղ, վորպես մարտակոչ:

Այս աղմկահյուս կյանքի խենթ բոցում
Այրում և սիրտըս սրբազան մի դող,
Հուզում և հոգիս մի վեհ հիացում,
Յեվ սարսափելին թվում և դյութող...

Մաշված և կյանքս վշտում անաղարտ
Յել տառապանքի որերում համառ,
Բայց ցաված սիրտըս բացել եմ հպարտ
Նորից ու նորից սիրելու համար:
Ուզում եմ, վաղվա ցնծության գուշակ՝
Կարոտըս նետած լուսեղեն հեռուն,
Վառել յերգերըս, վորպիս գրոշակի
Ու մեռնել վորպես հերոսն և մեռնում...

Զարթեք, յերգեր իմ, ժամ և հնչելու,
Զինելու նորից գնդերը ցըիվ,
Մեռած սրտերը կյանքի կոչելու
Յել բորբոքելու զայրույթ ու կռիվ...

1913 – 1919

* *

Դարձյալ իջավ գիշեր, դարձյալ —ու կրկին
Մենակ ես դու, ինքդ քո գեմ մերկ ու բաց.
Ու նորից դու շփոթմունքով ցավագին,
Յերկյուղով ես, յերկյուղով ես դու լցված:

Վորպես տերեն աշնամուտի՞ հողմի դեմ,
Դողում ես դու, վորպես շյուղը յեղեգի.
Ինքդ քո դեմ դու անզոր ես ու անզեն,
Ինքդ քո դեմ, ինքդ քո դեմ, իմ հոգի...

* *

Դարձյալ իջավ գիշեր, դարձյալ —ու կրկին
Մենակ ես դու, ինքդ քո դեմ մերկ ու բաց.
Ու նորից դու շփոթմունքով ցավագին,
Յերկյուղով ես, յերկյուղով ես դու լցված:

Վորպես տերեն աշնամուտի՝ հողմի դեմ,
Դողում ես դու, վորպես շյուղը յեղեղի.
Ինքդ քո դեմ դու անզոր ես ու անզեն,
Ինքդ քո դեմ, ինքդ քո դեմ, իմ հոգի...

* *

* *

Սրտակեղ կսկիծ մի հին,
Վոր անդուլ սարդի նման
Հյուսել ե հրե վոստայն,
Մաշում ե հար իմ հոգին:
Ու վորպես անդեղ մի ախտ,
Հին ցավ մի, թունոտ մի խոց,
Մթամած, ազահ մի բոց
Կիզում ե կյանքըս անբախտ:
Գնում եմ ուղին իմ ծուռ
Յել դիտեմ՝ դեպի կորուստ.
Նիշված ե բախտըս վերուստ
Յել չըկա փրկության դուռ...

Տնակն իմ ցուըտ ու անզարդ
Որերըս համը են հոսում.
Ընկերըս գարշ մի, գեշ սարդ
Վոստայն ե, չարը, հյուսում.
Հյուսում ե ցանց իմ սրտում
Կիտում ե թոզն իմ հոգում
Արյունըս նա յե արթուն
Քամում միշտ համը ու տոկուն.
Մեռնում եմ՝ լուռ ու դժվար
Անցնում եմ՝ հուր մի անույժ, —
Իջնում եմ սև մի աշխարհ,
Չար խոց են և միտք, և հուշ...

**

Մաքերից այս տարամերժ
Ազատեցնք ինձ,
Մորմոքումից այս անվերջ,
Անանց այս ցավից.
Խորն և խոցն իմ և աննինջ
Ու սրտակեղեք,
Բուժեցնք ինձ սիրով ջինջ
Յեվ բարի յեղեք.
Ուխտել եյի ընդունել
Տանջանքը — խնդում,
Բայց մոլորվեց սիրտս անել
Խոհերի բանտում.
Յես պարտվեցի մութ մարտում,
Ընկա չար խոցված —
Չեմ հավատում ել մարդուն
Յեվ չունեմ Աստված...

**

Դուրսը՝ մայիսն ե, արբածը.
Դուրսը՝ խնդում ու աղմուկ.
Ցուրտ ե զնդանը մեր, թաց ե.
Սիրտ իմ, անբախտ գու մանուկ.
Լույս ե յերկինքն ու փողոցը
Դուրսը՝ գարուն ե անմութ.
Դառն են հուշերը մեր, խոց են,
Վողջը անխինդ ու անգութ.
Սիրտ իմ, հիվանդ իմ, բավկ իմ,
Որը մեր, տունը մեր՝ ցուրտ.
Ցավ ե անցյալն ու գալիքը,
Ցավ ե յերազ ու խորհուրդ...

**

Ճուրտ հոկտեմբերն ե ծեծում իմ դուռը
Յեվ մըրկում ե հողմը գիշերըս.

Բոլորն անզոր ե, բոլորն իզուր ե
Յեվ անամոք ե, վորպես հուշերըս:

Քամին ծեծում ե, ցրում թերթերը,
Մի չար արև ե այրել յերկիրըս.
Մերկ անապատ են դարձել արտերը,
Վողբի նըման են բոլոր յերգերըս.

Թույն ու թախիծ են անյեղծ հուշերըս,
Մութ մաքերին իմ հողիս ավար ե. —
Ալեկոծում ե հողմը գիշերըս. —
Անծայրածիլ ե, սիրտ, քո խավարը...

**

Անդարդ իմ որվան, անտուն իմ կյանքին
Դեռ շատ ե գալու և բոց և աղետ.
Մինչև ազատվի հրկեղ իմ հոգին,
Հարություն առնե մոխրից առնավետ.
Մինչև դադարի մըրիկն այս մթին,
Մինչև հանդարտեն շշուկներն այս չար
Ու վատնեմ առատ իմ գանձը հետին
Յերկրային միգում յերկունքով հոժար.
Թող գան — պատրաստ ե սիրտըս և հլու,
Վորպես նորահարսն ահով մի խնդուն
Մանում ե մահիճ — այնպես տանջվելու
Գնում ե հոգիս հրճվանքով անհուն...

**

Վոսկեհանդերձ յեկար և միգասքող,
Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.
Տերեներիդ դանդաղ թափվող վոսկով,
Մետաքսներով քնքշաշրշուն:

Նայվածներով խորին, յեկար, ներռդ,
Յեկար կրկին զերող, խորհրդավիճը.
Յեկար հուշիկ, անչար ավաղներով
Ոբոններով ամենորոր:

Քո արևին հատնող և քո յերգին, յերգին
Յեկ շըշունիդ փափուկ, և բեկումիդ — վողջույն.
Ո, հարազատ, սիրած, յեկար կրկին,
Իմ քնքշագին աշուն...

**

Մաշում ե իմ սիրտն անդադար
Հին յերգ մի՝ ծանոթ ու տրտում.
Կիզում ե կարոտ մի արթուն,
Մաշում ե իմ սիրտն անդադար:
Դրժել եմ կարծես մի յերդում,
Մի ուխտ եմ թողել անկատար,
Մաշում ե իմ սիրտն անդադար
Հին յերգ մի՝ ծանոթ ու տրտում:

ՊԱՌԵՅԻՆ

Դու գիտես վոր բոլորն ապարդյուն,
Բոլորը «կատակ ե հիմար».
Բայց պահում ես խոհերդ տրտում
Ու գնում ես համառ:
Դու գիտես, վոր մոտիկ են հիմա
Որերը հանգիստ ու անվերջ,
Բայց գնում ես անդուլ... Գնա,
Մոտ ե որը հավերժ...
Ախ, մոտ ե որն այն անանց
Յեվ գիտենք—կըզա արագ.—
Բայց դու դեռ սիրում ես կանանց
Իրանն ու ձեռքը բարակ...

Նոյնն ե հասցեղ հնամյա,
Նույնն ե՝ ոթելը «Պարիծ».
Բայց տրտմությունըս հիմա
Այլ ե, կարոտըս՝ ուրիշ.

Նույնն ե խանութը գեմի,
Նույն ցուցանակը հիմար.
Նոյն մեղմախոս Վերլենի
Յերգն ես կրկնում դու համառ:

Գուցե այստեղ գտներ իմ
Սիրտը շրջիկ ու մոլոր
Յեվ խնդություն մի վերին,
Յեվ ամոքում, և որոր,

Բայց հեռանում եմ անկամ.
Ի՞նչն ե վանում ինձ, ինչու:
Միտդ ե, ինչպես մի անգամ
Ինձ ասացիր դու «գնչու»...

Դուք մոռացել եք այն «հանաբները»
 Յեվ համբույրներն այն, և սերն ամեն.
 Իսկ իմ սրտից այդ հիշատակները
 Վորքան արցունք գեռ պիտի քամեն...
 Չեզ համար սերը՝ «հաց ու պանիր հ»,
 Այսոր այստեղ եք — եկուց այնտեղ.
 Իսկ յես պահում եմ Ձեր սուվենիրը,
 Վորպես ծաղիկ մի՞ սուրբ ու աննեխ:
 Ծիծաղելի յեն Չեզ այս խոսքերը,
 Ծիծաղելի յեմ յես և հիմար.
 Հիշում եք, ինչպես մի որ «Հասկերը»
 Նվիրեցիք ինձ ծաղրի համար...
 Յես «յերեխա» յեմ — դուք միշտ կը կնում եք:
 Վոչ, հայ աղջիկ եմ՝ պարզ ու պարկեշտ:
 Իմ ցնորքները կծու հեգնում եք
 Յեվ յերգում սերը՝ ազատ ու հեշտ:
 Չեզ համար սերը՝ հաց ու պանիր հ,
 Այսոր այստեղ եք — եկուց այնտեղ.
 Իսկ յես պահում եմ Ձեր սուվենիրը,
 Վորպես ծաղիկ մի՞ սուրբ ու աննեխ...

**

Ախ, Բուզուլուկ քաղաքում
 Նստած ես հիմա;
 Ինձ ես մնում դու անքուն
 Ո, պրինցուհի նա:

Ինձ ես անվերջ յերազում
 Փայտե դղյակում
 Յեվ գիշերն ե արտասվում
 Քո Բուզուլուկ քաղաքում:
 Բայց յես չեմ գա բաղխելու
 Դուռը դղյակիդ.
 Յես հեռու յեմ, յես հեռու
 Ցնորքը կյանքիդ:

Անուրջներով միամիտ,
 Մտքով նվազուն,
 Ինձ ես պարզել պարզ հոգիդ
 Քո Բուզուլուկ քաղաքում:
 Շուտով արեն այդ միզում
 Ձերեկ կը դառնա,
 Դու նստած ես գեռ անքուն,
 Ո, պրինցուհի նա...

ՀՐԱԺԵՇԻ ԳԱԶԵԼ

ՊԱՍԼՈՅԻՆ

Յեկան որեր ու անցան ու ինձ վոչինչ չըմնաց.
Հուրեր, հուրեր — ծիածան ու ինձ վոչինչ չմնաց:

Գարնան անուշ ծաղկանց պես, վարդերի պես հրահրուն,
Հողմով տարված հեռացան ու ինձ վոչինչ չմնաց:

Ու նոքա վոր սիրեցին — սիրտըս նրանց չըտվի.
Գնացին ու չըդարձան ու ինձ վոչինչ չըմնաց:

Յեվ նոքա ում սիրեցի իմ ցալով ու խենթությամբ —
Արբեցին ու մոռացան ու ինձ վոչինչ չըմնաց:

Չմեռ իջավ իմ գլխին և ցուրտ, և խոր, և անդորր,
Աղբյուրներըս չորացան — վոչինչ, վոչինչ չըմնաց...

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ յես մնաս բարով.
Բորբ արեին իմ բոց սրտում ասում եմ յես մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ յես, բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու վորբ Աղամորդուն ասում եմ յես մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ յես, ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Վոսոյսներիս՝ չար ու արթուն, ասում եմ յես մնաք բարով:

Յերկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս վոլորտում, ասում եմ յես, մնաք բարով:

Վոսկեցթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտուտներին վոսկի արտում, ասում եմ յես, մնաք բարով:

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հողիներին,
Մանուկներին վառ խլառուն, ասում եմ յես, մնաք բարով:

Գնում եմ յես մի մութ աշխարհ, հեռու յիրկիր, ել չեմ գալու.
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով:

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1.

Սիրտըս ջահել ե նորից,
Սիրտըս դողում ե քո դեմ,
Սիրտըս գերված ե արդեն,
Սիրտըս ջահել ե նորից:
Սիրտըս, թագուն բոլորից,
Սուր ե մեխված իմ կրծքին,
Սիրտըս ջահել ե նորից,
Սիրտըս սիրում ե կրկին...

2.

Հուր ես հազել հրեղենըդ
Ալվարդը՝ կարմիր կրակ,
Նազում ես այնպիս բարակ,
Հուր ես հազել հրեղենըդ:
Նիզակը զարկ հրագենըդ,
Կիզիր իմ հոգին, ո հրակ.
Հուր ես հազել հրեղենըդ,
Ալվարդը՝ կարմիր կրակ...

3.

Նետում ես վոսկի նետերը՝
 Հուրերը — վորպես արև
 Յես գեմը — դողդոջ տերև,
 Նետում ես վոսկի նետերը՝:
 Դու բոց ես, յես խենթ թիթեռ եմ
 Դու վառ ես, դու հրաթե,
 Նետում ես վոսկի նետերը՝
 Հուրերը վորպես արև:

4.

Խոր են քո հուր աչքերը,
 Հուրը իմ հուրն ե այրում,
 Սիրալս յելգում ե հրում,
 Խոր են քո հուր աչքերը:
 Հուր են քո սուր տեգերը,
 Հուրը վառված իմ հրում,
 Խոր են քո հուր աչքերը,
 Հուրը իմ հուրն ե այրում:

5.

Հրով արթնացած սիրտըս,
Սիրտըս բացված հրավարդ.
Լից քո կրակը գվարթ
Հրով արթնացած սիրտըս:
Քո գեմ յերկյուղած սիրտըս,
Կիզիր, վորսկան հըպարտ
Հրով արթնացած սիրտըս,
Սիրտըս բացված հրավարդ:

6.

Այնպես որորուն և քայլըգ,
Սերըգ՝ ահեղ ու բորբոք.
Մաշիր հոգիս անողոք,
Այնպես որորուն և քայլըգ:
Այնպես հրահրուն և փայլըգ,
Նայվածըգ՝ այնպես շոգ,
Այնպես որորուն և քայլըգ,
Սերըգ՝ ահեղ ու բորբոք...

7.

Դիր քո կնիքը սրտում իմ,
Նիշտ՝ անյեղծ ու անջինջ.
Ո, հրեղեն դու և ջինջ,
Դիր քո կնիքը սրտում իմ:
Քեզ իմ աղոթքն ու յերդումը.
Քեզ պատարագ՝ ամեն ինչ.
Դիր քո կնիքը սրտում իմ,
Նիշտ՝ անյեղծ ու անջինջ...

8.

Զեմ տա յերբեք անունըդ
Մութ աշխարհի այս փոշում.
Բոց ե անունըդ հնչուն —
Զեմ տա յերբեք անունըդ:
Թող ինձ այրե սամումըդ,
Սերըդ վոր սիրտ ե փշրում.
Զեմ տա յերբեք անունըդ
Մութ աշխարհի այս փոշում.

9.

Չունի և պարսից արքան
Վորքան պոետն անտուն,
Այնքան գանձ ու խնդում
Չունի և պարսից արքան:
Հարուսա և պոետն այնքան
Յերկըի մթին բանտում...
Չունի և պարսից արքան
Վորքան պոետն անտուն...

10.

Վորպես մաղամ Բովարին
Սիրտ իմ լի յես տագնապով,
Խանդով խնդուն ու խարող,
Վորպես մաղամ Բովարին...
Յեվ ոտար և բոլորին
Կրակն այդ խենթ իր թափով,
Վորպես մաղամ Բովարին
Սիրտ իմ, լի յես տագնապով:

* * *

Յես չեմ հոգնել սիրելուց և յերգերից, և ցավից,
Ուղիներից անծանթ, աղեաներից նորանոր.
Վողջույն նորից ու նորից, նոր խնդություն, նոր թախիծ
Յեվ առավոտ անստվեր, և մեջդիշեր սևավոր:
Սիրտ իմ, բաց ես աշխարհի և չարի դեմ, սիրտ իմ, բաց,
Աշխարհն՝ արե, աշխարհն՝ ամպ, սիրտ — աղբյուր ես դու զուլալ:
Սիրտ իմ, հազար ցնորքով, հազար յերգով ես արբած,
Վիճակված ե քեզ հնչել — յերգով խնդավ յերգով լալ:
Ու խճնդում ե լացըդ պարզ և խնդումըդ՝ լացի պես,
Տիսրություն ե ամեն ինչ — յերազ ե և մոռացում:
Բացված ես դու, սիրտ իմ, նուրբ շուշանի պես, ծաղկի պես
Յեվ արեն ե այրում քեզ և մրբիկն ե քեզ ծեծում:

* * *

Աշուն ե, որերը ցրտում են,
Դիշերը սուլվում ե միգում.
Այնքան քնքություն կա սրտում իմ,
Այնքան մեղմություն իմ հոգում,
Այնքան տիսրություն, և անուշ ե,
Անուշ ե այս ցավը հետին.—
Բոլորը յերազ ե և հուշ ե,
Վոսկի յե — թափկաւմ ե գետին.. .

**

Սիրում եմ յես նրանց, վորոնք խենթ են ու անտուն,
Նրանց, վորոնք կայան չունեն և չունեն խնդում:

Կորածներին, շրջիկներին, մանուկներին վորբ
Ցեղ այն կանանց, վոր նայում են անամոթ ու ցոփի

Նրանց, վորոնք մահն աչքերում — գիշերում խավար
Թափառում են գաղտնագողի և փնտում ավար:

Նրանց, վորոնց մեռած սրտում արդեն սեր չըկա.
Նրանց, վորոնք — մահու պարտված — չար են ու ագահ...

Ախ, կուզեյի յես հարազատ և ընկեր լինել
Նրանց, վորոնք մոռացված են բանտերում անյել:

Ցեղ կուզեյի յեղբայր լինել նրանց, վոր մթին
Չարչարանքում կորցրել են կրակը հետին: —

Ցեղ անառակ իմ յեղբոր հետ ցանկապատի տակ
Կուզեյի յես մեռնել անբախտ և անհիշատակ:

ՊԵՏԵՐԲՈՒՐՔ

Ա Ռ Ն Ե Տ

Մառախուզներ՝ ծանր ու մռայլ բոլորած,
Յուրա կրակներ՝ ահարեկ ու ղողղոջուն,
Նեվմն, Նեվմն, միշտ զավադիր չի ննջում,
Վետերը՝ մութ ոձանման վորորած:
Ցեղ պալատներ — արյունաներկ անրջում —
Արքայական — սեախորհուրդ ու սառած —
Բյուր աչքերը խոժոռ ու չար սեհռած
Դիվային ինչ վոճիրներ են անրջում:
Աւ յերկինքն՝ ամպ, վոր հենվել ե սև գետին,
Հայցքով իր անսաստղ, անիմինդ ու մռայլ
Նայում ե միշտ այնպես ցուրտ ու անայլայլ
Վոր անսփոփ՝ աչքըդ նետում ես գիտին:
Բայց դյութիչ ե մղձավանջն այս դժնաքայլ,
Վոր զրկում ե քեզ ահերով իր մթին...

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խալար ինձ տարեք,
Ինձ տարեք այս յերկրից անարեգ:

Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ վեհանիստ,
Մեր արտերն արևոտ ու հանգիստ:

Փրկեցնք մոքերից այս անծայր,
Փրկեցնք խոսքերից այս խելոք,
Դարձըրեք ինձ մանուկ ու անհոգ:

Փրկեցնք սրերից այս սուրսայր,
Խորախող խոհերից խմաստուն,
Մեր արտերը տարեք, տարեք տուն...

Ի՞նչ մնաց ինձ — վոսկյա մի ցանց, ուրիշ վոչինչ,
Մարգարտաշար հուշերի գանձ, — ուրիշ վոչինչ:

Տրտում գիշեր և մենություն անողնական,
Սիրտ կեղեքող կարոտ անանց, — ուրիշ վոչինչ:

Յերազներից իմ հրավառ — մնաց փոշի, —
Սին անուններ կորած կանանց, — ուրիշ վոչինչ:

Զինջ իմ հոգուն — մնաց մշուշ, ծանր ու մթին
Յեկ իմ այգում՝ քամու կաղկանձ, — ուրիշ վոչինչ:

Պարի՞ր, քամի այգում այս մերկ վունա ու լաց,
Տար, մի թողնիր, քամի անսանձ, — վոչինչ... վոչինչ...

**

Տեսա յերազ մի վառ,
Վոսկի մի դուռ տեսա,
Վըրան փերճւզ կամար,
Սյուները՝ հուր տեսա:
Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա.
Մի հրեշտակ անգին
Սոսից պայծառ տեսա:
Յերկու բաժակ տեսա,
Վոսկի գինին եր վառ.
Յերկու նիզակ տեսա,
Յերկու անգին գոհար:
Սիրտը՝ խոցված տեսա,
Վերքիս արյունն եր վառ.
Դահճիս կանգնած տեսա,
Ասի՛ արելս առ...

**

Թողի յերկիրն՝ իմ հայրենի,
Անահ անցա Արար ու Հինդ:
Տեսա մարդիկ չորսգլխանի,
Տեսա հաղար աղետ ու խինդ:
Հասա մինչև Զինումաչին,
Հասա մինչև Ծովը Ճերմակ,
Տեսա յերկրի ծայրը վերջին
Յեվ զբախտի գուռը՝ կրակ:
Հաղար անզամ ծագեց Արև
Յեվ մայր մտավ հաղար անզամ,
Տեսա ծառեր հըրատերև,
Տեսա ակունքն արեգական
Յեվ փերիներ քնքույշ ու սկ
Աչքերը՝ բոց, իրենք՝ խավար
Յեվ փերիներ տեսա թեթև
Փրփուրի պես՝ ճերմակ ու վառ...

Բոլորը՝ ծուխ, բոլորն ավագ,
Բոլորն՝ ավար ջուր ու քամուն,
Չըկա՞ քեղնից գերիչ յերազ,
Քո անունից անուշ անուշ...

**

Քնքնէյշ դու, լուսե աղջիկ ես,
Արտուտ ես, վոսկե թռչնակ ես,
Չար նետը թող չղիպչի քեզ,
Աշուն ու ձմեռ չըդա քեզ
Թող սիրալդ միա խնդուն հար,
Հուկին քո — լուսե թիթեռդ —
Խաղա հար և հուրհուրա վառ,
Չար հուրը չայրե թհերըդ:
Հրե դու, արևային դու,
Մաքնէր դու, լուսե հասմիկ ես,
Անմար թող ցոլա քո խինդը,
Չար աչքը թող չըտեսնի քեզ...

**

Կանդնել ես դու նրբահասակ,
Ժպտում ես ինձ, գերում ես ինձ,
Պարզել ես ինձ յերկու նիզակ,
Յերկու հրով այրում ես ինձ:
Նազով նրբին ասում ես՝ յեկ.
Այնպես անուշ նայում ես ինձ. —
Խուրձ-խուրձ թափած մի սկ արեգ —
Շող-մազերով այրում ես ինձ:
Պարզվում ես ինձ, սիրուց գինով՝
Քնքույշ ձայնով կանչում ես ինձ,
Արրած եմ յես անուշ թունով,
Ափ, ինչ անուշ տանջում ես ինձ...

**

Այնպես նաղիկ, այնպես թեթև, այնպես որոր
Քայլում ես դու:
Վոսկելուսիկ, ո, հրաթև, այնպես բռոր
Փայլում ես դու:
Դու վիթ ահոտ, դու խուսափուկ, այնպես անույշ
Նայում ես դու:
Յեվ այնպես տոթ, այնպես փափուկ, այնպես քնքույշ
Փայում ես դու:
Նայվածըդ՝ տեղ, ժպիտը՝ նետ, ո, խնայիր,
Խայթում ես դու:
Ինքըդ՝ արեգ, սերըդ՝ աղետ, ո, մի՞ նայիր,
Դյութում ես դու:
Աշխարհն ամեն քո վոտի տակ — թագուհու պես
Տիրում ես դու.
Ո, հրեղեն, չար արեգակ, ում վոր նայես —
Այրնում ես դու...

**

Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում
Այնպես հոգնած ու այնպես տրտում.
Արդյոք ում վիշտն ե, ում ցավազին
Կարոտն ե կիզում Զեր պարզ հոգին:
Յես Զեղ սիրում եմ, յերբ Դուք, Տիկին,
Կարծես հիշում եք մնուած մեկին
Ու յերբ նայում եք այնպիս մաքուր
Յեվ այնպիս հեղ եք ու այնպես քույր.
Կարծես հեռվից եք հետըս խոսում,
Կարծես յերազ եմ Զեր յերազում,
Անտես մի գիրք եք կարծես կարդում
Յեվ կիսանիրն եք և կիսարթուն:
Կրակն անցնում ե բուխարու մոտ,
Ախ, ինչ անուշ ե լույսում աղոտ...

**

**

Զեռներում Զեր մանրիկ, նվագուն,
Զեր ձայնում, յերբ ասում եք «Տերյան»,
Զեր բարակ ժըպիտում նախրյան —
Մի թախիծ կա մեղմած ու թագուն:
Շուրթերում Զեր մաքուր ու բուրյան,
Զեր պարում՝ հեղանաղ ու ճշկուն,
Հաշտորեն խոնարհված Զեր հոգում
Նախրյանն ե յերգում, հնորյան...
Յերբ կիզում եք Զեր միշտ հրախանդ
Նայվածի բոցերով մթամած, —
Ուզում եմ որորել Զեզ կամաց,
Փայփայել յերգերով տնավանդ,
Տիրությամբ հնազանդ ու մեղմած,
Նախրյան նվագով իմ հիվանդ...

Միթե վերջին պոետն եմ յես,
Վերջին յերգիչն իմ յերկրի.
Մահն ե արդյոք, թե նի՞նջն ե քեզ
Պատել, պայծառ նախրի:

Վտարանդի, յերկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ յերազում
Ցեվ հնչում ե, վորպես աղոթք
Արքայական քո լեզուն:

Հնչում ե միշտ խոր ու պայծառ
Ցեվ խոցում ե, և այրում.
Արդյոք բոցե վարդերդ են վառ,
Թե վերքերն իմ հրահրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ՝
Ճումա, ցնորք նախրի, —
Միթե վերջին պոետն եմ յես,
Վերջին յերգիչն իմ յերկրի...

* *

Այնպես անխինդ են և նըման լացին
Յերգելն իմ յերկրի, այնպես տիրագին.
Մեղ չի հասկանա ոտարերկրացին,
Մեղ չի հասկանա սառն ոտարուհին:

Այն մելամաղձիկ, լացող, միյալար
Յելևները ներդաշնակ այնպիս
Յեղ հարազատ են սրտին մեր մոլար,
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեղ...

Տեսնում եմ ահա՝ զյուղերը մեր խեղճ
Յեղ թուլս գեմքերն այն տիսրության սովոր,
Իմ ժողովուրդը՝ անյել վշտի մեջ,
Յերկիրն իմ անբախտ և աղետավնար...

Թող հնչե յերգն այդ դառն ու ցավածին,
Յերգը հայրենի, ցավագար ու հին,
Մեղ չի հասկանա ոտարերկրացին,
Մեղ չի հասկանա սառն ոտարուհին...

* *

Կարձես թե դարձել եմ յես տուն,
Բոլորն առաջվանն ե կրկին.
Նորից գու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին.
Մանում ու հեքյաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ.—
Սիրում եմ պարզկա քո լեզուն,
Զենները մաշված ու բարակ:
Նայում եմ մինչև վոր անզոր
Դուլիսը ծնկիդ և թեքվում,
Նորից յես մանուկ եմ այսոր,
Դրախտ և նորից իմ հոգում:
Արկը հանգչում ե հեռվում,
Գետից բարձրանում ե մշուշ,
Հեքյաթը անվերջ որորում,
Իլիկը խոսում ե անուշ...

* *

Հիշում եմ՝ ինչպես այն ուշ
Աշուն եր վոսկեվորվում,
Մայրմուտն եր ժլատ վառվում,
Բըլուրը պատել եր մուժ...

Մեր գյուղն ե՞ս սարերը մերկ,
Մեր գետը՝ բարակ միզում,
Զանգակը՝ մեղմ ու բեկուն,
Թախծում են արոտ ու հերկ...

Յեվ մայրս ահա հիվանդ
Մըսում ե, արև ուզում,
Նստած ե հետք դրւում
Անխոս ու մեղմ հնաղանդ,

Յեվ ծեր ե մայրը այնքան,
Փոքրիկ ե — բարի մի մայր...
Ցոլում ե սարը սուրսայր,
Յերգում ե զանգը լալկան...

* *

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստում.
Կիզում ե քեզ մի հուր կնիք,
Մի հըմայող ու հին խոստում:
Յեվ միթհ այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ, այսպես քնքույշ
Յեվ խոնարհում քեզ պես համառ,
Ո, հայրենիք՝ գառն ու անույշ...

Չըշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով յերենք. —
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ
Յեվ յերգերը մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունը՝ խավար ու լուռ,
Աղոթքները՝ դառն ու ցավոս,
Զանգակներիդ զարկը՝ տըխուր
Յեվ խուղերիդ լույսերն աղոտ...

Մշուշի միջից, — տեսիլ դյութական, —
Բացվում ե կրկին նախրին արտում.
Վ՞ր յերկրի սրտում թախիծ կա այնքան
Յեվ այնքան ներում — վ՞ր յերկրի սրտում...
Վորտեղ են քարերն այնպես վերամբարձ
Զեռների նման պարզված յերկնքին,
Վորտեղ ե աղոթքն այնպես վիճ ու պարզ
Յեվ զոհաբերումն այնպես խնդագին...
Վորտեղ ե խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ,
Վորտեղ ե հոգին այնպես վիրավոր
Յեվ անպարտ յերկիրն այնպես արյունոտ...

Բարակիրան նախրուհին ինձ ժպտաց,
Նախրուհին տխուրաչյա և համեստ.
Այնպես վառ եր լեռնադստեր գեմքը բաց,
Նայվածն այնպես հրեղեն ու անարվեստ:
Յեվ հյուսիսյան հեռուներում ու ցրտում
Կարծես ցոլաց իմ նախրյան արեն ալ,
Կարծես բոցե մի վարդ բացվեց իմ սրտում
Յեվ չի կարող արբած հոգիս լուռ մնալ.
Յեվ չի կարող սիրտը չերգել այդ անբիծ
Հուրը, վոր ինձ ժպտաց այսոր ցուրտ հեռվում.
Այդպես արեն ե դուրս նայում մութ ամպից
Իմ նախրյան բարձր, բարձր աշխարհում. .

Վորպես Լաերտի վորդին, վորպես
Ուլիս մի, թողած և հող, և տուն,
Սնցա ծովեր ու ցամաքներ յես —
Ամեն տեղ ոտար և անխնդում.

Ու հոգնած քայլով ահա կրկին
Վերադառնում եմ հայլենի հող,
Դեպի քարերը աղնիվ ու հին,
Յեզ լրճիթները՝ ահով նիբհող:

Նվազով անուշ քանի սիրեն
Կանչում եյին ինձ և կախարդում,
Բայց սիրտը մաքուր, վորպես ցորեն,
Պահեց անունըդ վշտում արթուն:

Յուրա հեռուներում, անլոելի
Կրկեսների մեջ, սրտով մոլոր,
Յերազում եյի քո սիրելի
Յեզ մեղմ յերգերը, վորպես որոր:

Ու կարստակեն՝ ահա կրկին
Վերադառնում եմ, վոր առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին յերգին
Յեզ լամ, լամ անուշ քո յերգին հետ...

Ս Ո Ւ Ե Տ

Իջնում ե գիշերն անգութ ու մթին
Յեզ այդը բացվում դառն ու մահահոս,
Բայց հրկեզ հողիս մորմոքում այս տոթ
Հավատում ե դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին
Յեզ չարխինդ ճնշե հողն իմ արյունոս
Ու թող զա, թե կա, ավելի չար բոթ,
Մեխվի զոհ-յերկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, գարերի ժառանգ
Մի նեզ նախրցի՝ գնում եմ անկանգ. —
Թող գուժկան գիշերն ահասաստ դավիւ —
Վորքան մութը սկա այնքան յես համառ,
Յերկնիր, իմ յերկիր, հավատով անմար՝
Սուրբ ե՝ քո ուղին և պըսակը՝ վեհ...

Հայրենիքում իմ արնանիրկ
Գիշերն իշավ անլույս ու լուռ.
Այստեղ, ուր կար այնքան սիրերդ
Յեկ վարդի բույր, և սրտի հուր:
Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,
Ամեն հայացք՝ հատու մի սուր.
Արնոտ դիյերն են համը ու մերկ
Նայում յերկինք՝ անզոր ու զուրտ:
Մի որ ինչ վառ ծաղկեց մոգված
Մեր նախրյան սիրտը բեկված,
Հրով վորքան խորհրդավոր.
Ահա՝ վորպես ծաղիկ թեքված
Մեր հին հոգին՝ համը ու մոլոր,
Ա՛խ, և անզնը, և անարդված...

ԳԱԶԵԼ ԽՆԴՈՒԹՅԱՆ

Նվիրում եմ անմռաց Ստեփան Շահումյանի անման հշատակեն:

Սիրտը, վորպես վառ ատրուշան, պահիր վառ,
Սիրտը հրկեց, մթնում դաժան, պահիր վառ:

Սիրտը խանդոտ, հրաբորքոք, պահիր վառ,
Խինդը տենդոտ, սերըք՝ վահան, պահիր վառ:

Զար աշխարհի խավարի դեմ պահիր վառ,
Վորպես դրոշ արնանման, պահիր վառ:

Հեռվում անտուն, յեղիր խնդուն, պահիր վառ,
Սիրտը բորբոք — վարդը վառման պահիր վառ:

Վորպես խարույկ յելնող վկա, պահիր վառ,
Արկի պես, սիրտը վառման պահիր վառ...

Մի հին տրտմություն անսփոփ ու խոր,
Վորպես վիշտն անյել հայրենի հողիս,
Յերգում և սրտիս դառնագին որոր
Յեկ անդուլ ցավով մաշում և հողիս:
Դիտեմ՝ չի գալու ազատության որ,
Այնպես խոր գիտեմ, թեև անհանգիստ
Հոգիս մոգում են յերազով անզոր
Ու գեղ վորոնում անսփոփ վերքիս:
Աղմուկն այս կյանքի արգեն իմ սրտում
Հպում ե, վորպես մահերգ մի տրտում
Ու լսում եմ այն, վորպիս հնավանդ
Մայրական որոր տիսըությամբ անուշ.
Յեկ վաղուց հողիս արդեն հնազանդ
Զըգտում և յերկիրն... անցավ ու անհուշ:

Վորքան դեռ տրտունջ, քանի տրտմություն
Պիտի որորեն որերըս կըկին,
Մորմոքուն դողան խոնջած իմ սրտում,
Զուլվեն դառնությամբ լեցուն իմ հողին. .
Յեկ վորքան կարոս պիտի զա վրադ
Հոգիս, մահու չափ թախիծ ու խոցում,
Քանիցըս պիտի գողաս անփարատ
Յերկու աշխարհի սահմանագծում...

* *

Դարձար դու և սիրտըս տխուր ե.
Հնչիր — յերգից անուշ.
Բո ձայնը այնքան դեռ մաքուր ե,
Այնքան հարազատ մի հուշ.
Բայց սիրտըս արդեն խոնարհել ե.
Հոգիս արդեն մարել.
Թեթև ե արդեն ներելը,
Բայց... Անհնար ե սիրել...

*
* *

Լինեյի չոբան սարերում հեռու,
Գայիր, անցնեյիր վրանիս մոտով,
Իրար նայեյինք անուշ կարոտով,
Քնքույշ ժպտայինք հանկարծ իրարու,
Դնայիր աղբյուրն ու յետ գառնայիր
Թեթև, վորպես վիթ, յելնեյիր ձորեց.
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
Ու վըրանիս մոտ հանգստանայի՛ր:
Յեվ վերջալուսին մի որ, ու մի որ,
Մանիշակագույն սարերի լանջին
Բացվեյինք իրար խոսքերով չնչին,
Բայց ուխտը՝ լիներ անխարդախ ու խոր:
Աւ յերբ գնայիր — գիշերըս անքուն
Դառնար գալիքի մի թովիչ խոստում
Ու վառվեր հոգիս պարզ ու իմաստուն
Իմ վըրանի տակ, սարերի գրկում:

* *

Հովիմսերն այնտեղ կրակ են արել
Սարերի վրա —ու անուշ հեռու.
Չայնում են անվերջ մթնում իրարու
Հովիմսերն այնտեղ կրակ են վառել:
Ախ, սիրսս թռավ աշխարհն այն հեռու
Ուր, հին, հնչում ես բարբառ հայրենի.
Հովիմսերն այնտեղ կրակ են արել
Սարերում իմ բաց, ու անուշ հեռու...

* *

Հովիմսերն աղատ հեռու սարերում
Կըրակ են անում — ձայնում են իբար:
Յես՝ կալանավոր աշխարհում արար —
Հովիմսերն աղատ հեռու սարերում:
Ու յերկրից՝ յերկիր — գերումից՝ զերում
Գնում եմ անդուլ, անհայտին ավար,
Հովիմսերն աղատ հեռու սարերում
Կըրակ են անում — կանչում են իբար...

**

Հովիմսերն այնտեղ կրակ են արել
Սարերի վրա — ո, անուշ հեռու.
Զայնում են անվերջ մթնում իրարու
Հովիմսերն այնտեղ կրակ են վառել:
Ախ, սիրս թռավ աշխարհն այն հեռու
Ուզ, հին, հնչում ես բարբառ հայրենի.
Հովիմսերն այնտեղ կրակ են արել
Սարերում իմ բաց, ո, անուշ հեռու...

**

Հովիմսերն աղատ հեռու սարերում
Կըրակ են անում — ձայնում են իրար
Յես՝ կալանավոր աշխարհում արար —
Հովիմսերն՝ աղատ հեռու սարերում:
Ու յերկրից՝ յերկիր — գերումից՝ զերում
Գնում եմ անդուլ, անհայտին ավար,
Հովիմսերն աղատ հեռու սարերում
Կըրակ են անում — կանչում են իրար...

* *

Դու հնչիր, քո սրտի գարունն ե,
իսկ իմում՝ վերջինն ե հիվանդոտ,
Բայց քոնից բորբոքուն ու խանդոտ,
Դու հնչիր, քո սրտի գարունն ե:
Ո, յերգիր, քո հոգին վառվում ե,
իսկ իմում՝ մահացում ե տենդոտ,
Դու հնչիր, քո սրտի գարունն ե,
իսկ իմում՝ վերջինն ե հիվանդոտ...

* *

Ո՛, կըգան որեր ավելի տրտում
Ու դժնի, դժնի, առավել դժնի.
Կըգառնա հանկարծ բոլորն ապարդյուն,
Ո՛, կըգան որեր ավելի տրտում:
Կըլու տրտունջն անամոք սրտում
Յեղ փոշու նըման ձանձրույթը կիջնի...
Ո՛, կըգան որեր ավելի տրտում
Յեղ դժնի, դժնի, առավել դժնի...

	Ցհլ.
1. Առաջաբան	7
2. Տիրություն	17
3. Fatum	18
4. Աշնան յերդ	19
5. Աշնան մեղեղի	20
6. Ինձ թաղեք	21
7. Կարոս	22
8. Իրինաժամ	23
9. Յեսանչափած եմ հայրենի հողից	24
10. Աշնան տրամություն	25
11. Հրաժեշտի խոսքերից	26
12. Իմ գերեզմանին դուք չմոռենաք	27
13. Մթնշաղ	28
14. Երեկո	29
15. Սանտիմենտալ յերդ	30
16. Դարձ	31
17. Զմրան գիշեր	32
18. Մոռանալ, մոռանալ	33
19. 14 առղ	34
20. Գարուն	35
21. Գալնանամուտ	36
22. Փողոցի յերգը	39
23. Աև գիշեր	40
24. Հնչում ե անվերջ	41
25. Աշնան գիշեր	42
26. Ճնորք	43
27. Հայրենիքում	44
28. Տիրուր յերդ	46
29. Resignation	47
30. Աշնան	48
31. Հեկելում ե անվերջ	49
32. Ուշացած սեր	50
33. Անտրոնչություն	52
34. Արշալոյս	53
35. Դարձան քաղաքում	54
36. Թափառումի սեր	56
37. Փողոցում	57
38. Զմրան գիշեր	58
39. -Հայտնություն	59
40. Կարուսել	60
41. Շշուկ ու շըշտն	62
42. Արկածագ	63
43. Վերապարձ	64
44. Դարձալ իշավ գիշեր	69
45. Սրտակեղ կոկիծ մի հին	70

* *

Գինով եմ, զինով եմ յես ել,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի.
Որորիր մեզ պանդոկ-կարուսել
Որորիր, որորիր մեզ, զինի:

Պոետ մի անտեր ու անտուն,
Գիտեմ յես՝ կորած եմ, կորած.
Բայց դեռ յերգն իմ յերգում ե տեհում —
Ո, յերադ ե, յերազ ու յերադ...

Ինչ քաղցր ե նստել այստեղ,
Ժպտալ քո խոպին սեթեթ,
Խոկ ներսում իմ, ներսում մի ասեղ
Աստղում ե՝ ննջել առհավետ...

Պարում են, յերգում վետերում,
Սահում ենք յեթեր առ յեթեր.
Գուցե վաղն խոկ կարդաս թերթում
Յել ժպտաս՝ «հանգյամի ի տեր»...



Ա. Կ. ՄԱՏԱՆԻ

46. Տնակն իմ ցուըտ ու անդարդ	71
47. Մաքելից այս տարամերժ	72
48. Դուրս մայիսն ե արբածը	73
49. Ճուրտ հոկտեմբերն ե ծեծում իմ դուռը	74
50. Անգարդ իմ որդան	75
51. Վոսկեհանդելը յեկար	76
52. Մաշում ե իմ սիրտն անդադար	77
53. Պառոյին	78
54. Նույնն ե հասցեղ հնամյա	79
55. Նամակ	80
56. Ախ, Բուզուլուկ քաղաքում	81
57. Պառոյին	82
58. Հրաժեշտի գաղել	83
59. Տրիուսներ	84
60. Յես չեմ հոգնել սիրելուց	94
61. Աշուն ե, որերը ցրտում են	95
62. Սիրում եմ յես նրանց	96
63. Պետերբուրգ	97
64. Հոգնեցի գրքերից անհամար	98
65. Ի՞նչ մնաց ինձ	99
66. Տեսա յերազ մի վառ	100
67. Թողի յերկիրն իմ հայրենի	101
68. Քնքնեց, դու, լուսե աղջիկ ես	102
69. Կանգնել ես զու նըրահասակ	103
70. Այնպես նաղլիկ	104
71. Դուք մի հին վեպ եք	105
72. Զեններում Ձեր մեմորիկ	106
73. Միթե վերջին պոետն եմ յես	107
74. Այնպես անխինդ են	108
75. Կարծես թե զարձել եմ յես դուն	109
76. Հիշում եմ ինչպես այն ուշ	110
77. Դու հպարտ չես, իմ հայրենիք	111
78. Մշուշի միջից	112
79. Բարակիրան նախուհին	113
80. Վերադարձ	114
81. Սոնետ	115
82. Սոնետ	116
83. Գաղել ինսդության	117
84. Մի հին արտմություն	118
85. Վորքան դեռ արտունջ	119
86. Դարձալ գու	120
87. Լինելի չորան սարերում հիտո	121
88. Հոլիվիներն այստեղ	122
89. Հոլիվիներն ազատ	123
90. Դու հնչիր, քո սրտի գարունն ե	124
91. Ո՛, կան որեր ավելի արտում	125
92. Գինով յեմ, գինով եմ հս ել	126

ԳԻՆՆ Ե 1 ԱՌԵԲԼԻ

457
Հ | ԱՐՄ.
2-180.

9

Ժ

ԱՐԴ

8011

ՀՀ Ազգային գրադարան



NL0375040

58666

2-180a